# ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յարգելի Խմբագրութեան «Արարատ» ամսագրի

*«Արարատի» անցեալ Յունուար ամսի համարում «Մայր Աթոռի» բաժնում տպագրուած էր մի տեղեկութիւն, որ իբր թէ եզիտի քրդերի կրօնաւորների գլխաւոր երիտասարդ Շէյխ Միրան Իսմայել Բէկ Աւդիլբէկ օղլին նոյն ամսի 13-ին Մայր տաճարում աղօթելուց յետոյ նուիրել է տաճարին մի գեղեցիկ կարպետ։*

*Ճիշտ է յարգելի Շէյխը նոյն օրը աղօթել է Յովհաննու Մկրտչի սեղանի վերայ և վառել չորս հատ մոմ, սակայն մի այդ պիսի նուէր երբէք տեղի չէ ունեցել։*

*Թիւրիմացութիւնների առաջը առնելու համար խնդրում եմ յարգելի Խմբագրութեանդ հրատարակել այս մասին «Արարատի» մերձակայ համարում։*

*Մայր տաճարի Լուսարարապետ՝* **Գեւորգ Եպիսկոպոս.**